

կ'ըսէ. «Ճաշակեցէք խաղաղութեամբ», եւ
կը նստին ճաշի:

19. — Կարգ կերակրոց: — Մեր խըն-
դրոյն կարեւորագոյն մէկ կետին վրայ ենք
հոս. այն է՝ թէ ի՛նչ կ'ուտէին նախնիք
եւ ի՛նչ կարգով: Հարկաւ այս մասին բո-
լոր դարերն իրարու չպիտի նմանէին. զոր
օրինակ հինգերորդին կերակրոց ճոխու-
թիւնը, զանազանութիւնն ու նրբութիւնը
չենք տեսներ ուրիշ ոչ մէկ ժամանակ,
կամ զոնէ նոյնչափ մանր յիշատակուած
չեն հետագայ մատենագրաց կողմանէ:
Կրնանք սակայն առանց սխալելու խոր-
հիլ՝ թէ Հայաստանի անկախութեան կամ
թագաւորութեանց միջոցին աւելի հարըս-
տութիւն կար թէ ազնուականաց եւ թէ
ժողովրդեան մէջ, եւ այդ շրջաններու խըն-
ճոյք աւելի շքեղ էին՝ քան բարբարոսաց
տիրապետութեան ներքեւ տուայտող դա-
րերու մէջ: Հարստութիւնն էր՝ որ Հռով-
մայ դռներն ալ բացաւ զեղխութեանց առ-
ջեւ: Տեսնենք ուրեմն ինչ որ հայ անցեալն
աւանդած է մեզ:

Ա. Տարակոյս չկայ՝ թէ ուտելեաց մէջ
առաջինն էր միշտ հացը, որ կ'ընկերէր
ուրիշ կերակրոց, մերթ իւր անունն ամ-
բողջ ճաշին ալ տալով (աստ, 112, '20),
եւ որ մեծ խնամով կը պատրաստուէր՝